



Ինչպես ամեն տարի, այս տարի ևս մայիսի 14-ին Վեսպրեն քաղաքում անցկացվեցին Գիզելլայի օրերը: Վեսպրեն քաղաքը հիմնադրվել է Իշտվան թագավորի կողմից՝ որպես նվեր իր տիկնոջը՝ Գիզելլային, այդ իսկ պատճառով քաղաքը հայտնի է նաև «Թագուհիներ ի քաղաք»

անվամբ: Տասնյակ տարիներ շարունակ Վեսպրենում տեղի են ունենում Գիզելլային նվիրված օրեր, որին մասնակցում են հազարավոր զբոսաշրջիկներ աշխարհի տարբեր վայրերից: Վեսպրենի 5 փոքրամասնությունների հետ մեկտեղ այս գեղեցիկ տոնին իր մասնակցությունը ունեցավ նաև Վեսպրենի Հայ Ինքնավարությունը, որի ընթացքում հայ մշակույթը ներկայացրեցին իրենց փայլուն ելույթներով աչքի ընկան օպերային հայտնի հայ երգիչ Նելսոն Սահակյանը և հայտնի ակորդեոնիստ Դավիթ Ենգիբարյանը: